ԱՆԺԵԼԱ ԽՈՐԵՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան
anzhelkhorenyan@gmail.com
DOI: 10.54503/978-5-8080-1587-6-287

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Բանալի բառեր - Ավետիք Իսահակյան, հուշագիրներ, ազգային հիշողություն, հայրենիք, ազգապահպանություն:

Ամփոփում

Հոդվածում անդրադարձել ենք խորհրդահայ ճանաչված մտավորականների (Ա. Ինճիկյան, Լ. Հախվերդյան, Ս. Աղաբաբյան, Ստ. Զորյան, Ռ. Զարյան, Վ. Մնացականյան, Ս. Կապուտիկյան, Նվարդ Թումանյան, Հ. Սիրաս, ինչպես նաև Ի. Իսահակյան) հուշ-գրառումներին, որոնք վերաբերում են Իսահակյանի ապրումներին ու խորհրդածություններին՝ կապված իր երկրի ճակատագրի, հայ ժողովրդի պատմության, հասարակական խնդիրների հետ: Ինչպես են նրան տեսել և զգացել ժամանակիցները:

Նպատակն է առանձին մարդկանց հիշողությունների միջոցով ներկայացնել բանաստեղծի կյանքն իր ապրած ժամանակի մեջ, ազգային ճակատագրի խնդիրներով մտահոգ նրա խոհական մտքերն իր առօրյա շփումներում:

Խնդիրն է համեմատական-վերլուծական մեթոդի միջոցով զուգահեռներ անցկացնել հուշագրի բերած իրողության ու բանաստեղծի ստեղծագործական գրառումների միջև՝ ցույց տալով, որ գրողի արտահայտած խորհրդածություններն ու գաղափարներն արծարծված են նաև նրա գրավոր խոսքում՝ հրապարակախոսական ելույթներում, հոդվածներում, աֆորիզմներում, նամակներում, որոնցով էլ հուշագրի ներկայացրածը դառնում է հավաստի:

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ բանաստեղծի արտահայտած գաղափարները ժողովրդի գոյապահպանության, ազգային հիշողության, հոգևոր արժեքների, ազատության ձգտման, մաքառման, անկոտրում հավատի, տիրոջ հոգեբանությամբ իր երկրի վրա ապրելու տեսակետից այսօր էլ չեն կորցրել իրենց ազդեցության ուժը և շատ կարևոր պատգամ են սերունդներին:

Կարծում ենք, որ Վարպետի ծննդյան 150-ամյակի առիթով ժամանակի հեռավորությունից հետաքրքրություն կներկայացնի մեծ գրողի կերպարի ընկալումը և բացահայտումը նրան ճանաչած և նրան ունկնդրած մարդկանց հիշատակումներում:

ANGELA KHORENYAN
PhD in Philology, Associate Professor
The House-Museum of Avetik Isahakyan
anzhelkhorenyan@gmail.com

AN OVERVIEW OF AVETIK ISAHAKYAN'S LITERARY AND SOCIO-POLITIKAL VIEWS IN THE MEMOIRS OF SOVIET-ARMENIAN INTELLECTUALS

Keywords: Avetik Isahakyan, memoirs, national memory, homeland, preservation of the nation.

Abstract

The article addresses the memoirs of prominent Soviet-Armenian intellectuals (A. Injikyan, L. Khachverdyan, S. Aghababyan, St. Zoryan, R. Zaryan, V. Mnatsakanyan, S. Kaputikyan, Nvard Tumanyan, H. Siras, as well as I. Isahakyan), that relate to Isahakyan's feelings and thoughts concerning the fate of his country, the history of the Armenian people, and social issues. How he was perceived by his contemporaries.

The goal is to present the poet's life within the era he lived in, his contemplations as reflected in his everyday interactions on the problems of nation's destiny through the memories of individuals

The task is to use a comparative-analytical method and draw parallels between the reality described in the memoirs of others and the poet's

creative writings—showing that the thoughts and ideas expressed in his reflections are also echoed in his written works: public speeches, articles, aphorisms, and letters, making the memoir accounts valid.

The relevance of this study is conditioned by the fact that the poet's expressed ideas—about the preservation of the nation, national memory, cultural values, striving for freedom, struggle, unshakable faith, and living with the mindset of a true owner in one's homeland—have not lost their significance today. They remain an important message to future generations.

We believe that the perception and revelation of the great writer's image in the recollections of those who knew and listened to him will be of special interest on the occasion of the Master's 150th anniversary from the distance of time.

АНЖЕЛА ХОРЕНЯН
Кандидат филологических наук, доцент
Дом-музей Аветика Исаакяна
anzhelkhorenyan@gmail.com

ОБЗОР ЛИТЕРАТУРНО, ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКИХ ВЗГЛЯДОВ АВЕТИКА ИСААКЯНА В ВОСПОМИНАНИЯХ СОВЕТСКИХ АРМЯНСКИХ ИНТЕЛЛИГЕНТОВ

Ключевые слова: Аветик Исаакян, мемуары, национальная память, родина, сохранение нации.

Аннотация

В статье рассматриваются мемуары известных советско-армянских интеллектуалов (А. Инджикян, Л. Хачвердян, С. Агабабян, Ст. Зорьян, Р. Зарян, В. Мнацаканян, С. Капутикян, Нвард Туманян, О. Сирас, а также И. Исаакян), относящиеся к переживаниям и размышлениям Исаакяна о судьбе своей страны, истории армянского народа и общественных проблемах. Каким его видели и чувствовали современники.

Цель состоит в том, чтобы через воспоминания отдельных людей представить жизнь поэта в контексте его эпохи, раскрыть его философские мысли о проблемах судьбы нации в повседневном общении.

Задача заключается в том, чтобы с помощью сравнительно-аналитического метода провести параллели между действительностью, описанной в мемуарах, и творческими записями поэта — показать, что его размышления и идеи отражены также в его письменном наследии: публицистических выступлениях, статьях, афоризмах, письмах, которые подтверждают подлинность воспоминаний.

Актуальность работы обусловлена тем, что идеи поэта — о сохранении народа, национальной памяти, духовных ценностей, стремлении к свободе, борьбы, несокрушимой, а также с точки зрения психологии хозяина на своей земле — и сегодня не потеряли своей силы и являются важным заветом для потомков

Мы полагаем, что по случаю 150-летия Мастера будет интересно постичь восприятие и раскрытие характера великого писателя в воспоминаниях людей, знавших его и слышавших его, даже сквозь дистанцию времени.

Ներածություն

Ավետիք Իսահակյանը երկարատև տարագրությունից հետո հայրենիք վերադարձավ 1926 և արդեն վերջնականպես 1936 թվականին: Նրա վերադարձը պայմանավորված էր ամենից առաջ հայրենի երկրի հանդեպ անպարագիծ կարոտով, այն մեծ սիրով, որը հունավորում է նրա գրական ժառանգությունը, Իսահակյանին՝ որպես խորապես ազգային բանաստեղծի և ազգային գործչի: 1925 թվականին Վենետիկից նա գրում էր Վահան Նավասարդյանին. «... ամբողջ հոգով ձգտում եմ Հայաստան: Նա միայն կարող է ինձ կենդանացնել, ժողովրդի հետ, նրա մեծ շնչով շնչել: 15 տարի եղավ որ պանդուխտ եմ. 15 դար... բավական է» (Իսահակյան, 2021: 129):

Նա հայրենիք վերադարձավ տառապանքի բաժակը ցմրուր ըմպելուց հետո: Իր կյանքն ազգային-ազատագրական պայքարին նվիրած բանաստեղծը, որ հույսեր էր փայփայում հայ ժողովրդի փրկության, բախվեց պատմական այնպիսի դաժան իրողությունների, որոնցում դրված էր իր ժողովրդի լինել-չլինելու հարցականը: Առաջին հա-

մաշխարհային պատերազմին, հայոց Մեծ եղեռնին, աշխարհակալ տերությունների քաղաքական խարդավանքներին, երկրի տարածքների կորստին ականատես բանաստեղծի համար տարագրության մեջ մղձավանջի դաժան ժամանակներ սկսվեցին. «Օհ, ի՞նչ ժամանակներ են ներկայումս, ավելի վատ, քան երբևէ եղել է այս թշվառ երկրագունդի վրա, որի անունը այսուհետ «արյունագունդ» պիտի կոչել. ոչինչ ավելի» (Իսահակյան, 2020: 275) (1916 թ. Կարեն Միքայելյանին Իսահակյանի գրած նամակից):

Իր բազմաթիվ գրառումներում, ստեղծագործությունների ձեռագրերում, (մասնավորապես՝ «Ուստա Կարո» վեպի), «Հիշատակարան»-ում, նամակներում անդրադարձվում է բանաստեղծի վերաբերմունքը ժամանակի իրադարձություններին: Դրանցում նրա տագնապներն են, վախերը, անհուսությունը: Այս իրողություններով էին պայմանավորված նույն երևույթին, կուսակցություններին, կատարված անցքերին տրվող հակասական գնահատականները: Նրա արտահայտած մտքերի ու տեսակետների հակասականությունը բխում էր ժողովրդի փրկության ելքերի որոնումից:

Հուզական զգացողություններն ի վերջո տեղի տվեցին այդ ամենին սթափ նայելու անհրաժեշտությանը: Հայ «պաշտելի, մե՛ծ, ամո՛ւր» ժողովրդի կենսական ավիշն իր մեջ կրող բանաստեղծը որոշեց վերադառնալ Խորհրդային Հայաստան, ընդունել իրականությունն այնպիսին, ինչպիսին որ էր: Բացի այդ, բոլշևիկյան իշխանություններն իրենք էին հրավիրում, ժողովուրդը սիրում ու սպասում էր նրան, դա ամենակարևորն էր, և կար ևս մեկ պատճառ. Իսահակյանն անվերջ նյութական կարիքի մեջ էր, ինչն անընդհատ զբաղեցնում էր միտքը: Հայրենիքում դա այլևս չէր անհանգստացնելու նրան: Բանաստեղծը որոշեց վերադառնալ, տեսնել, հասկանալ, ինչպես ինքն էր մտածում, կարո՞ղ էր արդյոք համակերպվել նոր իրականությանը: 1926 թվականի հունվարի 15-ին Վենետիկից Կարեն Միքայելյանին Իսահակյանը գրում էր. «Հարցնում ես իմ Հայաստան դառնալու մասին: Վճռել եմ վերադառնալ. չգիտեմ լավ քայլ է արածս, թե վատ, - բայց պիտի դառնամ, թեև առջևս կան շատ դժվարություններ պատնեշված:

Կարոտել եմ շա՜տ հայ ժողովրդին, ընկերներիս և մեր ցորենի արտերին: Բայց չգիտեմ, պիտի կարողանա՞մ այնտեղ ապրել - ես կոմունիստ չեմ - բայց համակրում եմ նրանց՝ հայ մեծամասնականների վարքագիծը և հավատում եմ մեր երկրի ապագային, մեր ժողովրդի բնածին իմաստությանը, նրա առողջ բնազդին» (Իսահակյան ա, 2021: 137-138)[1]:

Առաջին այցելության ընթացքին Իսահակյանին չափազանց գրավեցին հայրենիքում տեղի ունեցող մեծ փոփոխությունները. անհամար կորուստներից հետո երկիրը փորձում էր ոտքի կանգնել: Իսահակյանի այս ոգևորության արդյունքը եղան այդ թվականներին գրված նամակներն ու հոդվածները («Խորհրդային Հայաստանում», «Խորհրդային Հայաստանի մասին»...): Կնոջը և որդուն՝ Սոֆյա և Վիգեն Իսահակյաններին, 1926 թ. հոկտեմբերի 12-ին, այսինքն՝ անմիջապես Հայաստան հասնելուց հետո գրում էր. «Գործի, աշխատանքի երկիր է Հայաստանը: Գլուխները կախ աշխատում են, համբերանքով և հույսով: Անշուշտ, մի 10 տարի հետո, Հայաստանը, եթե ունենա խաղաղություն և աջակցություն դրսից, շա՜տ գեղեցիկ, լավ երկիր է լինելու: Հիմքերը լավ են դրված: Երանի՛ երիտասարդ լինեի և ընկնեի գործի, սև, չարքաշ գործի ծովում» (XIV, 177):

Իսահակյանը վերջնականապես հայրենիք վերադարձավ արդեն պատկառելի՝ վաթսունմեկ տարեկան հասակում: Սակայն հայրենիքում էլ նա ապրեց ստալինյան բռնապետության սարսափները՝ ականատեսը լինելով նաև իր գրչակից ընկերներից շատերի ձերբակալություններին, ֆիզիկական ոչնչացմանը: Բնականաբար, բանաստեղծն ստիպված եղավ հարմարվել խորհրդային անազատ պայմաններին, վերևներից եկած հանձնարարականներին՝ իր ցավն ու խոհերը հանձնելով թղթին: Ու թեև Իսահակյանը հայրենիքում ապրեց՝ շրջապատված սիրով ու մեծարանքով իր ժողովրդի մեջ, վայելեց իր սիրասուն հայրենի հողի բերկրանքն ու գեղեցկությունը, եղավ Հայաստանի գրողների միության անփոփոխ նախագահը, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի առաջին ակադեմիկոսներից մեկը, շրջապատվեց սիրելի ընկերներով, գրեց հրաշալի ստեղծագոր-

[1] Այսուհետև կնշվի հատորը և էջը:

ծություններ, որոնցում իր հայրենիքի հավերժության ու հարատևության գաղափարն էր արտահայտում («Հայրենի ծուխը», «Հայրենիքիս» («Ցորենի ծփուն արտերի եզրին»), «Մեր պատմիչները և մեր գուսանները»), իսկ 1956 թվականին գրված «Ա՜խ, ինչքա՜ն, ինչքա՜ն կուզեի լինել» բանաստեղծությունում հիշողություն-մտորում-իղձ-ընդհանրացում փիլիսոփայության մեջ հաստատում ժողովրդի ապրելու կամքի անկոտրում հավատը, բայց, միևնույնն է, բանաստեղծի հոգում ընդմիշտ ապրեց ցավը. հայրենիքի կիսատության զգացումը, նրա կորուստների մորմոքը երբեք չլքեցին Իսահակյանին:

Ազգային երազի կորստի զգացողությունը հուշերում

Հայրենիքում Իսահակյանի մասին գրվեցին բազմաթիվ հուշեր, որոնցից շատերի հեղինակները ժամանակի ճանաչված մտավորականներն էին, ոչ միայն հայ, նաև օտարազգի՝ գրողներ, արվեստի, գրականության, գիտության բնագավառի հայտնի դեմքեր՝ Դերենիկ Դեմիրճյան, Ստեփան Զորյան, Ռուբեն Զարյան, Արամ Ինճիկյան, Սիլվա Կապուտիկյան, Հովի. Ղանալանյան, Վիկտոր Համբարձումյան, Կորնեյ Չուկովսկի, Սեմյոն Եվգենով և ուրիշներ: Ժամանակին հուշերի հեղինակներից շատերը դրանք հրատարակել են առանձին գրքույկներով: Այդ գրառումներում պատկերված է Իսահակյան մարդու, փիլիսոփայի, մեծ գեղագետի, հայ և համաշխարհային գրականության, ազգային արժեքների գնահատողի, քաղաքացու, մեծ հայրենասերի ազնիվ նկարագիրը:

Գրականագետ Ավիկ Իսահակյանն իր «Իսահակյանը հուշագիր» հոդվածում, խոսելով այն հետաքրքիր հուշերի մասին, որոնցում Վարպետն անդրադարձել է ժամանակի իր սիրելի մեծերին՝ «ձգտելով իր հերոսների գաղափարախոսությունը, քաղաքական հայացքները ժողովրդին հասցնել», միաժամանակ նշում է, որ Իսահակյանի նման մեծության բախտը չի բերել «իր գրչեղբայր հեղինակների հուշագրություններում արժանի չափով երևալու տեսանկյունից»՝ դա բացատրելով այն հանգամանքով, որ գրողներից շատերը հուշեր չեն գրել, իսկ շատերն էլ կյանքից շուտ են հեռացել, և «... նրա անվանը հավասարազոր հուշերի ժողովածու դեռ չկա» («Ավետիք Իսահակյան-145. գիտաժողովի նյութերի ժողովածու», 2021: 24):

Ափսոս, որ այդպես է:

Մեր նպատակն է աշխատանքում անդրադառնալ Իսահակյանի՝ հայրենիք վերադարձի շրջանի խորհրդահայ որոշ մտավորականների այն հուշ-գրառումներին, որոնցում արտացոլվում են Իսահակյան հայրենասերի անհանգիստ մտասևեռումներն իր երկրի ու ժողովրդի ճակատագրի շուրջ: Գրականագետ Լևոն Հախվերդյանը գրում է. «Վարպետին կարող էինք տեսնել փողոցում՝ մշտապես նույն քայլվածքով, նույն կերպարանքով. դանդաղաքայլ ու մտահոգ, ասես իր ժողովրդի ահռելի պատմության ծանրությունն ուսերին... Չկար ոչինչ, որ նրա միտքը զբաղեցներ ավելի, քան ազգային ճակատագրի խնդիրը: Ամեն խոսք ու զրույց, ինչից էլ սկսվեր, էլի գալիս ու հանգում էր դրան՝ մեր բազմադարյան պատմության բոլոր փուլերով, Վարդանանց պատերազմից մինչև Սևրի դաշնագիրն ու դրանից հետո... Ազգային շարժումների խորտակումը, որ կատարվել էր իր իսկ աչքի առաջ, հանգիստ չէր տալիս իրեն քուն թե արթմնի: Դա այն էր, ինչ Չարենցը կոչում էր ուղեղային մորմոք: Կարծես ամբողջովին դրա հետ էր՝ անձնականը դարձած ազգային վշտի հետ: Մեկ կորսված հայրենիքի մորմոքն էր չարչարում միտքը, մեկ փրկությունն էր համարում հրաշքի պես բան: Ազգային ճակատագրի ողբերգությունը կապարի ծանրությամբ նստած էր իր մեջ. դրանից չէր ազատվում և, կարծես, չէր էլ ուզում ազատվել. ինչո՞ւ այսպես եղավ, ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչու՞...» (Հախվերդյան, 1976: 183, 187):

Հուշագիրները գրեթե առանց բացառության նշում են, որ Իսահակյանը շատ էր սիրում զրուցել, զրույցը նրա տարերքն էր, և հաճախ խոսակիցը նրան անհրաժեշտ էր բարձրաձայն մտորելու համար: Հուշերում բանաստեղծի արտահայտած մտքերն ու գաղափարները տեղ են գտել նաև նրա գրառումներում, հրապարակախոսական ելույթներում, հոդվածներում, նամակներում: Եվ սա գալիս է ասելու, որ Իսահակյանի առօրյա կյանքն էլ, զրույցներն էլ ստեղծագործական հար և չընդհատվող պրոցես են եղել:

Արամ Ինճիկյանի հուշերը հատվածաբար, ըստ տարեթվերի Իսահակյանի կյանքի առանձին դրվագների, նրա խորհրդածությունների խտացված տարեգրումն են. այսպես՝ Ինճիկյանի՝ 1937 թվի հու-

նիսի 2-ի մի գրառում. «Գնացել էի Զվարթնոց, ուր Կարո Ղաֆադարյանը թանգարան էր կազմակերպում: Կեսօրին մոտ եկան Վարպետը, Մարտիրոս Սարյանն իր տիկնոջ՝ Լուսիկի և Աշխեն Թումանյանի հետ: Հողածածկ խրճիթի տանիքում ծիծեռնակը բույն էր շինել, և ամեն անգամ, երբ մայր ծիծեռնակը ներս էր մտնում՝ լսվում էր ձագերի ծվծվոցը: Տեսնելով այդ, Լուսիկ Սարյանը (Ղազարոս Աղայանի դուստրը) սկսեց երգել. «Ծիծեռնակը բույն էր շինում, և՛ շինում էր, և՛ երգում...»:

Երբ երգն ավարտվեց, Վարպետը, ձեռքը մեկնելով դեպի խրճիթի տանիքը, թախծախառն ժպիտով ասաց.

- Հայ ժողովուրդն է... Նա էլի բույն է շինում, և՛ շինում է, և՛ երգում...

Եվ լռեց»:

Հավանաբար այդ օրվա տեսանելի պատկերի ու հիշողության արձանագրումն է Իսահակյանի 1941 թվականի գրառումը. «Աղայանի «Ծիծեռնակը բույն էր շինում և շինում էր և երգում...» իմ մշտական սիրած բանաստեղծությունն էր և է՛, անզուգական, շատ հուզիչ, խորունկ, հայ աշխատավոր ժողովրդի դարավոր կյանքի ու պայքարի գեղարվեստական պատկերը, սիմվոլը» (XII, 736):

Դեռ ստեղծագործական ճամապարհի սկզբում Իսահակյանն իր բռնադատված ժողովրդի փրկության ճանապարհը համարում էր նրա ոգու ամրությունը և ազատության ձգտումը, որը մղում է նրան անհնարինը հնարավոր դարձնելու գաղափարին, «Հայոց աշխարհի վրա սավառնում է հայի տառապող, արյունող և դեպի անհունը ձգտող ոգին, ուրիշ ոգի չկա այդ լեռների վրա» (XII, 596), և Ինճիկյանի՝ 1955 թվականի հետևյալ գրառումը տեսանելի է դարձնում, թե բանաստեղծի խոսքի ազդեցության ուժը՝ չհանձնվելու և մաքառելու, որքան մեծ կարող էր լինել իրեն լսողների համար. «Վարպետին հանդիպեցի Պետհրատի միջանցքում. նրան շրջապատել էին Պետհրատի աշխատակիցներ, երիտասարդ գրողներ...

...Խոսում էր մեր ժողովրդի դիմակայուն ուժի, ոգու հզորության, կենսունակության մասին... “- Չնայած անհաշիվ աղետներին, հալածանքներին, կոտորածներին՝ ապրեցինք, ապրեցինք հակառակ

նրանց, ովքեր մեզ համար ամեն ինչ վերջացած էին համարում...”» (Ինճիկյան ա, 1977: 244):

Հուշ-գրառման առանձնահատկության միջոցով, որը, կարծես, ապահովում է անմիջական շփում ընթերցողի և հերոսի միջև, մեծանում է ասվածի հոգեբանական ազդեցությունը:

1949 թվականին Ավ. Իսահակյանը գնացքով մեկնում էր Մոսկվա՝ մասնակցելու Խաղաղության կողմնակիցների համամիութենական կոնֆերանսին, նրան ուղեկցում էր գրականագետ Վազգեն Մնացականյանը: Մի քանի օր շարունակ նա վայելել է մեծ բանաստեղծի ընկերակցությունը, գրառել նրա մտքերը: Ամենատարբեր թեմաներով զրույցների մեջ, իհարկե, իր ուրույն տեղն ուներ փոքր ժողովրդի գոյապայքարի պատմության դասի իսահակյանական փիլիսոփայությունը. Մնացականյանի այն հարցին, թե ում է Վարպետը համարում ամենամեծ զորավարը, Իսահակյանը պատասխանում է. «Վարդանը, Գարիբալդին, Կուտուզովը... Ես իմ սկզբունքն ունեմ: Ով զորքերի քիչ քանակով է սուր բարձրացրել իր հայրենիքի թշնամիների վրա, իսկական զորավարը նա է: Հաղթանակն այստեղ այնքան էլ կարևոր չէ, ոչ էլ պարտությունը, այլ պատմությանը թողած դասը, որն առաջին հերթին ուսանելի է փոքր ժողովուրդներին: Պետք է կռվել, դիմադրել, նահատակվել, եթե անհրաժեշտ է, միայն թե ծունկի չգալ օտարի թրի սարսափից» (Մնացականյան, 1968: 380): Այս միտքն, ի դեպ, նույնությամբ կա նաև Իսահակյանի աֆորիզմներում (տե՛ս XII, 893): Սա նաև բանաստեղծի պատգամն է հետագա սերունդներին՝ տեր լինելու իրենց պատմությանն ու երկրին:

Այս նույն տեսանկյունով է Իսահակյանը չափազանց կարևորում հայ գրականության երկերը ազգային գաղափարաբանության, ազգապահպանության, ժամանակի մեջ իրենց խաղացած դերի իմաստով, և դա ոչ միայն իր ստեղծագործություններում, աֆորիզմներում, նաև իր զրույցներում, ուր դարձյալ հուշ-պատկերի միջոցով գրախանութի առաջ կանգ առած բանաստեղծի «կենդանի» խոհերն են փոխանցվում գրականագետ Սուրեն Աղաբաբյանի գրառումով. «Շրջվեց դեպի մեզ և ձեռնափայտով ցույց տվեց «Վարդանանքը». “Մեծ գիրք է, հարյուր տարի կպահի ժողովրդին: Անմահության գիրք

է: Ժողովուրդ, ազգ պահելու համար են գրվում գրքերը: «Վերք Հայաստանիի» ուժը հենց դրա մեջ է. ազգի հույսերն են ոգի առել: Ռաֆֆին իր վեպերի հաջողության համար նույնպես դրան է պարտական”:

Լռեց, նորից շարունակեց. “ Աբովյան, Ռաֆֆի, Դեմիրճյան, եթե ետ գնանք դարերով՝ Խորենացի, Եղիշե... սուրբ գրքեր...”» (Աղաբաբյան, 1982: 183):

1948 թվականին Ավետիք Իսահակյանը կնոջ՝ Սոֆյա Իսահակյանի հետ, որի նախնիները շուշեցիներ էին, մեկնում է Լեռնային Ղարաբաղ՝ առանց իշխանություններին տեղեկացնելու: Նրա այցելության մասին իր «Կյանքը հրացանի փողի տակ» գրքում պատմում է գրող Բոգդան Ջանյանը, որն այդ տարիներին Լեռնային Ղարաբաղի գրողների միության մարզային բաժանմունքի քարտուղարն էր, նա ուղեկցում էր Վարպետին (ի դեպ, սա պատճառ դարձավ նրա բանտարկության): Իսահակյանը եղավ Ստեփանակերտում, Շուշիում, այլ բնակավայրերում: Ջանյանը պատմում է, թե ինչպես էր անվտանգության աշխատակիցը ամեն տեղ հետևում Վարպետին, ու թեև բնակչությունը մեծ խանդավառությամբ էր դիմավորում իր սիրելի բանաստեղծին, բայց այդ այցելությունից մռայլվեց ու մթագնեց նրա հոգին, որի արդյունքը եղավ «Ղարաբաղյան օրագիր (1948 թ. հուլիս)» գրառումների տետրը, այն դեռևս 1988 թ. հրատարակել է իսահակյանագետ Ավիկ Իսահակյանը (Իսահակյան Ավ., 2008: 3)[2]: Այդ օրագրում տեղ գտած գրառումներից շատերը 73-ամյա բանաստեղծի տեսածի, զգացածի վշտահար հիշատակումներն են. «Մարդկության, մեծ ազգերի, լուսավոր ազգերի աչքերի առաջ մի ողջ ժողովուրդ հայրենազրկվում է, հրեա է դառնում, բայց ոչ ոք ձեռք չբարձրացրեց՝

կասեցնելու բարբարոսի հարվածները, դաժան գործը, միմիայն մղված էգոիստական, գազանային բնազդներից, հաշիվներից...», կամ՝ «Սեփանակերտ՝ հլու-հպատակ, ձևական ավտոնոմիա, ֆիկցիա, իրավազուրկ գրեթե, ինքնավար չէ բնավ, ամեն բանի մեջ, ամենաչնչին բանի մեջ ենթարկվող Բաքվին...» (XII, 666):

---

[2] Այդ մասին տե՛ս «Վարպետը և Արցախը», կազմող՝ Ավիկ Իսահակյան:

Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի հետ կապված իրադարձություններին՝ Սիլվա Կապուտիկյանն իր «Էջեր փակ գզրոցներից» գրքում հիշում է, որ Ղարաբաղ և Նախիջևան անունները իր կյանք են մտել Իսահակյանի զրույցների շնորհիվ, և որ Վարպետի խոսքում հաճախ էին հնչում Անի, Կարս, Վան անունները: Նրա մի փոքրիկ հուշ-գրառումը բավական է՝ պատկերացնելու իր երկրի կորուստների բեռան տակ կքած հայ բանաստեղծի անմխիթար հոգեկան վիճակն ու հուսահատությունը. «“Քսանմեկ թվականին Թուրքիայի հետ կնքած պայմանագրում նշած է, որ Նախիջևանը Ադրբեջանին է տրվում քսան տարով”,– և Վարպետը դանդաղ, մտասևեռ քայլում-գնում էր իր առանձնասենյակը ու վերադառնում գիրքը ձեռքին:- “Ահա, ձեր աչքով կարդացեք այդ կետը, գրված է՝ «հանձնվում է 20 տարով»: Ո՞ւր է, ժամկետն անցել է, ինչո՞ւ չեն վերադարձնում”» (Կապուտիկյան, 2023: 219):

Ռուբեն Զարյանի ստվար հուշերում մի շատ փոքրիկ դրվագ է առանձնանում՝ նկարագրության իր սեղմության մեջ չափազանց ողբերգական խորքով.

«Գրողներից մեկը մոտեցավ Իսահակյանին.

- Ինչպե՞ս ես, Վարպետ:

Վարպետը նայեց նրան երկար, խոր հայացքով ու ասաց.

- Անիի եկեղեցին քանդում են, լսե՞լ ես:

Ու առանց պատասխանի սպասելու հեռացավ» (Զարյան, 1975: 189): Իրեն Անիի քաղաքացի համարող հայ բանաստեղծի ստեղծագործությունում բացառիկ դեր ունեցած Անին ոչ միայն որպես հայ ճարտարապետության գլուխգործոց է ընկալվում, այլև պատմություն ու էություն, որ գոյավորում է ազգի անցյալի հիշողությունը՝ որպես անընդհատելի կապ սերունդների շարունակականության և հարատևության: Եվ որքան ժամանակը մեզ հեռացնում է մեր պատմական ու մշակութային արժեքներից, այնքան դրանք արժևորելու ու հոգևոր հենարան ունենոլու կարևորությունը մեծանում է: «Անին,- գրում է Իսահակյանը,- մենք մեր ետում չունենք, այլ միշտ մեր առաջը: Որքան տարիները հեռանում են, այնքան մենք մոտենում ենք նրան»

(XII, 563): Եվ հասկանալի է, թե ինչ հոգեկան ապրումներ պետք է ունենար նա այդպիսի լուրն առնելիս:

Այսպես, հանուն ազգային գաղափարների ու իդեալների մտահղացված իր «Ուստա Կարո» անավարտ վեպն էլ, որ, Ավիկ Իսահակյանի բնութագրմամբ, Իսահակյանի կյանքի գիրքն էր և դարձել էր նրա երկրորդ ես-ը, ոչ միայն գրողի նամակների, գրառումների մեջ է հիշատակվում, այլև անընդհատ բանավոր զրույցներում, այնքան, որ երբ դրա մասին չէր խոսում, նրան լսողներն իրենք էին հարցնում, թե երբ կավարտվի վեպը: Երբեմն սրտի ցավով Իսահակյանը խոսում էր նաև այն ավարտելու անհնարինության մասին, քանի որ չկային այլևս վեպի հղացման քաղաքական հիմքերը: Դա Իսահակյան գրողի ողբերգությունն էր, վեպի անավարտությունն, ըստ էության, գրողի ստեղծագործական դժբախտությունն էր: Շատերի գրառումներից հատկանշական է Թումանյանի դստեր՝ Նվարդ Թումանյանի հուշը. «Երեկոյան Աբովյան փողոցով անցնում է, ուսանողները հեռվից դիտում են, հետևում, մոտենում են, ծանոթանում, հարցնում են՝ Վարպետ ի՞նչ եղավ «Ուստա Կարոն», ե՞րբ պիտի լույս տեսնի:

«Ուստա Կարոն» մեռավ:

- Ինչպե՞ս թե:

- Մեռել է «Ուստա Կարոն», ժամանակները փոխվեցին, աշխարհայացքը փոխվեց, էլ չի գրվում» (Հովհաննիսյան, 1992: 63): Գրառումը թվագրված է՝ 1947 թիվ, մայիսի 25: Սակայն Իսահակյանը շարունակեց աշխատել վեպի վրա մինչև իր կյանքի ավարտը:

Բանաստեղծի վերաբերմունքը երկրին առնչվող խնդիրներին

Միշտ և ամենուր Ավետիք Իսահակյանն ստեղծագործեց և ապրեց իր օրերի անհանգիստ հևքով, բանաստեղծին թվում էր, թե Խորհրդային Հայաստանի տարածքում ամփոփված հայ ժողովուրդը գոնե այլևս պաշտպանված է ֆիզիկական բնաջնջումից, հնարավորություն է ստացել ապրելու և շենացնելու իր հայրենիքը, և սա մխիթարում էր հայրենակորուստ բանաստեղծին, սակայն Երկրորդ համաշխարհային պատերազմը առաջացած տարիքում գտնվող զգայուն գրողի հոգու վերքերին նորերն էր ավելացնում: Իր հոդվածներում,

ելույթներում և հատկապես «Ռազմակոչ» բանաստեղծությունում նա պայքարի կոչ էր հնչեցնում ֆաշիզմի դեմ, հավատ ու ուժ ներարկում իր ժողովրդին: Ինճիկյանը հիշում է իր ռազմաճակատ մեկնելու հրաժեշտը Իսահակյանին. «Վարպետը թախծալի ժպտաց. հուզվեց. աչքերը խոնավացան. համբուրեց ճակատս, ձեռքով խփեց ուսիս, որպես քաջալերանքի նշան, և ասաց.

- Գնա՛, մի՛ վախի, այստեղ որ բացվի ՝ ես էլ կգամ...

Եվ դողդոջուն աջը մեկնեց պատշգամբը, որտեղից երևում էր Արարատը աշնան մշուշում...» (Ինճիկյան ա, 1977: 235):

Վարպետի մասին իր բազմաթիվ հուշ-գրառումներում Հմայակ Սիրասը նույնպես հիշատակում է Իսահակյանի այդ սպասումների մասին. «Շատ զոհեր տվինք, դեռ թվերը չեն ճշտված, բայց քսան միլիոն, սարսափելի է, երբ կմտածեմ: Հայերս էլ երեք հարյուր հազարի չափ, բոլորը վառվռուն երիտասարդներ: Արտասահմանի հայերը կոմիտեներ են կազմել, հայկական հողերի հարցն են հարուցում: Այստեղ էլ կարծես թե բարյացակամ են, միայն թե արդար վճիռ լինի...Դու ի՞նչ ես լսել... շատ հարմար ժամանակ է» (Սիրաս, 1984: 54):

Պատերազմի հաղթական ավարտը հույս ներշնչեց մեծ բանաստեղծին, հայ ժողովրդին՝ Արևմտյան Հայաստանի հողերի վերադարձի, Փարիզում լույս տեսնող «Ժողովուրդ» թերթի խմբագրությանը 1945 թվականի հուլիսի 10-ին Իսահակյանը գրում էր. «Հայաստանն այսօր ցնծության մեջ է և լցված է հավատով մոտալուտ պայծառ ապագայի հանդեպ... բարբարոսների սրից մազապուրծ փրկված՝ թափառական, հալածական հայերը պիտի ստանան իրենց անկապտելի իրավունքը - ազատագրված հայրենիքը: Եվ պիտի իրականանա մեր դարերի բաղձանքը – մեր հայրերի նվիրական հողերում կարողանալ աշխատել և վայելել հայրենիքի քաղցրությունը» (XIV, 495-496): Սակայն հայ ժողովրդին և Իսահակյանին կրկին վիճակված էր ապրելու հերթական հիասթափությունը:

Ստեփան Զորյանն Իսահակյանի մասին իր հուշապատումում գրում է, թե երկրին առնչվող ոչ մի կարևոր խնդիր չէր շրջանցում բանաստեղծին. «Օր չէր անցնի, որ չխոսեր հայրենիքի հին ու նոր ցավերից, ժողովրդի վիճակից, ցանկանալով, որ այս կամ այն խնդիրը բա-

ռեհաջող լուծում ստանա...» (Զորյան, 1991: 133): Այդպիսի շատ կարևոր խնդիրներից մեկն էլ Սևանա լճի ճակատագիրն էր. կառավարության ընդունած որոշումը՝ օգտագործել Սևանի ջրերը ոռոգման նպատակով, հունից հանում էր բանաստեղծին, նա հիանալի գիտակցում էր, թե դա ինչ աղետ կբերեր լճին և փոքր, քարաշատ Հայաստանին: Նրա գործադրած ջանքերը՝ կասեցնելու այդ որոշումը, ապարդյուն էին: Սևանի գեղեցկությանը նվիրված բանաստեղծական նկարագրությունների կողքին Իսահակյանի գրառումներում տեղ գտան նրա մռայլ կանխատեսումները. «Սևանը չորացնելուց հետո հայությունը կզգա, թե ինչ դատարկություն է մնալու՝ ինչպես սիրած էակի մահից հետո» (XII, 575), իսկ «Իմ բաղձանքը՝ չմեռնեի՝ Անին տեսնեի, մեռնեի Սևանը չորացած չտեսնեի» (XII, 562) արտահայտությունը ձևակերպում է հայ բանաստեղծի երկրի գոյության, նրա ապագայի մասին անհանգիստ հույզերը: Իր խռովահույզ զգացումները նա արտահայտեց Սևանին նվիրված «Մեր սպանված դիցուհին» բանաստեղծությունում, որն այն տարիներին, իհարկե, չէր կարող տպագրվել: Հուշագիրները գրում են, թե ինչ զայրույթով էր Իսահակյանը խոսում այդ անհեթեթ ծրագրի հեղինակների մասին, այս առումով բազմաթիվ հուշերի մեջ առավել ամբողջական է Իզաբելա Իսահակյանի[3] հուշը, որտեղ նա նկարագրում է բանաստեղծի հոգեկան ապրումները, որոնք տարիներ շարունակ ուղեկցել են նրան. Ու թեև Իսահակյանը որոշել էր այլևս Սևան չգնալ՝ չտեսնելու նրա ցամաքող ջրերը, այնուամենայնիվ, չի կարողանում դիմադրել կարոտին և մեկնում է. «Վշտալից նայում էր լճին,- գրում է Ի. Իսահակյանը,- Լճի չորս բոլորը սպիտակ գոտի էր գոյացել: Հառաչեց, ասաց. “Տեսե՛ք, տեսե՛ք, ի՞նչ են արել, թոկը գցել են կապուտաչյա գեղեցկուհու վիզը և քաշում են, հա քաշում, խեղդամահ են անում”:

Նորից հառաչեց, լճից մի բուռ ջուր վերցրեց, խմեց, թե համբուրեց, չգիտեմ...»:

Իսահակյան մեծ բանաստեղծի կյանքի ու խոհերի այս պատումները, նրա ապրումների, անհատականության և ստեղծագործա-

[3] Իզաբելա Իսահակյանը Իսահակյանի որդու՝ Վիգեն Իսահակյանի կինն էր, մասնագիտությամբ՝ դերասանուհի:

կան հավատամքի արձանագրումներեն են, հավաստումը նրա այն ինքնաբնութագրման, թե՝ «Ո՛վ հայրենիք՝ սիրո, վշտի, հույսի ծով. քեզ կրում եմ հոգուս մեջ, ամբողջ քեզ, իմ հայրենիք, իմ սեր» (XII, 584):

Եզրակացություն

Ավետիք Իսահակյանին վիճակված չէր հատկապես իր ստեղծագործական լավագույն տարիներին համեմատաբար խաղաղ պայմաններում ապրել ու ստեղծագործել: Կրելով իր մեջ ազգային հիշողության ու իր ժողովրդի պատմության ողբերգականության ծանր բեռը՝ նա շարունակեց ապրել այդ բեռան ծանրության տակ: Նրա գրառումները հայելային արտացոլանքն են այն թախծի, որ կրում էր բանաստեղծն իր հոգում ու արտահայտում նաև իր զրույցներում, այդ զգացողությունները զգում, տեսնում ու հուշագրում էին նրա ժամանակակիցները:

Աշխատանքում առանձին անձանց հուշերի զուգահեռումը նրա գրականության, խոհրդածությունների, ստեղծագործական մտքերի հետ հնարավորություն է տալիս հավաստիության ու ամբողջության մեջ տեսնել բանաստեղծի ապրած կյանքը: Միևնույն ժամանակ տեսանելի է դարձնում մեծ հայրենասերի իղձը՝ դարերի ու ժամանակների դաժան փորձությանը դիմակայելու հավատի ուժը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աղաբաբյան Ս.,** Հոդվածներ, դիմանկարներ, հուշեր, Երևան, «Սովետական գրող», հրատարակչություն, 1982, 366 էջ:
2. Ավետիք Իսահակյան-145. գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, «Քոփի փրինթ», 2021, 284 էջ:
3. **Զարյան Ռ.**, Հուշապատում, Գիրք առաջին, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1975, 536 էջ:
4. **Զորյան Ստ.,** Հուշերի գիրք, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1991, 336 էջ:
5. **Ինճիկյան Ա.,** Ավետիք Իսահակյան, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1977, 257 էջ:
6. **Իսահակյան Ավ.,** Երկերի լիակատար ժողովածու տասնչորս հատորով, հ. XII, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, 2021, 984 էջ:

7. **Իսահակյան Ավ.,** Երկերի լիակատար ժողովածու տասնչորս հատորով, հ. XIII, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, 2020, 720 էջ:
8. **Իսահակյան Ավ.,** Երկերի լիակատար ժողովածու տասնչորս հատորով, հ. XIV, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, 2021, 1136 էջ:
9. **Կապուտիկյան Ս.,** «Էջեր փակ գզրոցներից», Երևան, «Ապոլոն» հրատարակչություն, 2023, 676 էջ:
10. **Հախվերդյան Լ.,** «Ժամանակի հետ. Հոդվածներ», Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1976, 355 էջ:
11. **Մնացականյան Վ.,** «Ժամանակի հետ», Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1968, 411 էջ:
12. **Սիրաս Հմ.,** Քսանմեկ տարի Ավետիք Իսահակյանի հետ, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1984, 124 էջ:

Մամուլ

1. **Հովհաննիսյան Ս.,** «Նվարդ Թումանյանի հուշ-գրառումները Ավետիք Իսահակյանի մասին», «Նորք», Երևան, 1992, թիվ 5-6, էջ 63:
2. «Վերածնված Հայաստան» ամսագիր, Երևան, 1990, թիվ 3, էջ 62:

REFERENCES

1. **Aghababyan S.,** Hodvatsner, dimankarner, husher [Articles, Portraits, Memoirs], Yerevan, «Sovetakan grogh» hrat., 1982, 366 ej.
2. Avetik Isahakyan-145. Gitazhoghovi nyuteri zhoghovatsu [Avetik Isahakyan-145. Collection of Conference Materials], «Copy Print», 2021, 284 ej.,
3. **Zaryan R.,** Hushapatum, Girk arachin [Memoir Chronicle, Book One], Yerevan, «Hayastan» hrat., 1975, 536 ej.
4. **Zoryan S.,** Husheri girk [Book of Memoirs], Yerevan, «Hayastan» hrat., 1991, 336 ej.
5. **Inchikyan A.,** Avetik Isahakyan [Avetik Isahakyan], Yerevan, «Sovetakan grogh» hrat., 1977, 257 ej.
6. **Isahakyan A.,** Erkeri liakatar zhoghovatsu tasnchor hatorov, h, XII [Complete Works in Fourteen Volumes, Vol, XII], Yerevan, «Edit Print» hrat., 2021, 984 ej.

7. **Isahakyan A.,** Erkeri liakatar zhoghovatsu tasnchor hatorov, h, XIII [Complete Works in Fourteen Volumes, Vol, XIII], Yerevan, «Edit Print» hrat., 2020, 720 ej.
8. **Isahakyan A.,** Erkeri liakatar zhoghovatsu tasnchor hatorov, h, XIV [Complete Works in Fourteen Volumes, Vol, XIV], Yerevan, «Edit Print» hrat., 2021, 1136 ej.
9. **Kaputikyan S.,** Ejer pak gzdrotsnerits [Pages from Closed Drawers], Yerevan, «Apolon» hrat., 2023, 676 ej.
10. **Hakhverdyan L.,** Zhamanaki het, Hodvatsner [With Time: Articles], Yerevan, «Hayastan» hrat., 1976, 355 ej.
11. **Mnatsakanyan V.,** Zhamanaki het [With Time], Yerevan, «Hayastan» hrat., 1968, 411 ej.
12. **Siras Hm.,** Ksanmek tari Avetik Isahakyani het [Twenty-One Years with Avetik Isahakyan], Yerevan, «Sovetakan grogh» hrat., 1984, 123 ej.

Magazines

1. **Hovhannisyan S**., Nvart Tumanyani hush-grarrumnery Avetik Isahakyani masin, [Nvard Tumanyan's Memoirs about Avetik Isahakyan], «Nork», Yerevan, 1992, tiv 5-6, 63 ej.
2. «Veratsnvats Hayastan» amsagir [Reborn Armenia magazine], 1990, tiv 3, ej. 62